

ՄԵՐՈՒՄՈՐՃՆԵՔ

1936 Մարտ 29, Կիրակի

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆ.ՅԵՍԱՐՈՒԹՅՈՒՆ

A diagram of a complex knot or braid pattern, consisting of several strands forming loops and crossings.

Մեր Թեմակալ Գեր. Սրբազններու, Առաջնորդարաններու Մեծայարգ Պատ-
սօնական Մարմիններու, Գաւառական Ժողովին մինչեւ Թղին. Խորհուրդներ, եւ ընդ-
հանուր մեր Սիրելի Ժողովրդեան:

Գիտեք որ Ս. Գրիգոր Լուսավորջի Վիրապամսի Տօնը Ուխտի օր է Կաքողիկոսարանիս համար:

Լուսաւորչի Տօնք այս տարի աւելի եւս փառաւորելու նպատակով եւ Վեհափառ Հայրապետերու փափառով, որուած է Եպիսկոպոսական վերջին ժողովին մէջ որ Մթբալոյս Մեռոնի Օրինութիւն կատարուի այդ առքիւ:

Հայաստանեաց Եկեղեցւոյ հազուադիպ տօնակատարութիւններէն մէկն է ՄԵ-
ռուսօրինէելը, որ միւս մեծ հանդիփուութեամբ կատարուած է քէ՛ Էջմիածին եւ քէ՛ Սիս,
հաւասացեալներու խուռն բազմութեան Եւեկայութեամբ, որոնք Եւեկրին ամէն կողմէն
կը գիմեն Ս. Արքո, ափամատես լինելու այս հանդէսին եւ վայելելու օրինութիւնաբեր
արարութեան հոգեպարագ խրախնաճէր:

Անթիւսակի Կարողիկոսարանին մէջ, անցնող հինգ տարիներու լիբրացին, նախ 1931 Մայիս 24ին կատարուեցաւ Եպիսկոպոսական Ձեռնադրութիւն յանձին ող բացեալ Նահի Ս. Արքեպիսկոպոսի: Ապա 1935 Մայիս 12, Եր., ինքն բարեկիւսակ Նահի Մրազան կատարեց Ձեռնադրութիւնը հինգ Սարկաւագաց, Դպրեվանի Դ. 'Իսասարանի աւակերտներէն' իսկ Յունիս 16, Կիր. բահանայացուց Դպրեվանի Շշանաւարտ Դասարանն երկու երիտասարդներ եւ կրօնաւորի վեղար տուաւ անոնց:

Առաջիկայ Մարտ 29, Կիրակի առուու պիտի կատարուի Օրհնութիւնը Սրբալոյս Մեռունի՛ Վեհ. Տ. Բաբգէն Կարողիկոսի ձեռքով եւ հանդիսադրութեամբ բոլոր Թեմակալ Սրբազններու:

Անբիլիասի կալուածը այլեւս նուիրագործուած է իբրեւ նոսոց Կիլիկիոյ Ս. Կարողիկոսներուն, իբրեւ Դպրեվանի՛ իր Մատենադարանով եւ Տպարանով, իբրեւ Ուխտավայր՝ Ս. Լուսաւորչի Տօնին առքիւ, եւ իբրեւ Աշխարհամատուր Կիլիկիոյ Վտարանի Կարողիկոսութեան, վերջապէս իբրեւ Մրգավայր Շնորհաբաշխութեանց. Եւ այս անգամ, Մեռնուօրինեկի արարողութեամբ, աւելի եւս պիտի ժեւսուի այս հաստատութեան նուիրագործումք:

Արդ, նկատի առնելով այս պարագաները, հայրական սիրով կը յորդորենք մեր բարեկած եւ պատուական ժողովուրդը որ օքսուի Մեռունօրհնենքի հանդեսէն եւ իր հնչուն օժանդակութիւնը բերէ Արոտիս, զնելու համար Անրիլիասի կալուածը եւ գարձրնել զայն ազգային Եկեղեցական-ստացուածք։ Երեք հազար Օսմ. ոսկի բաւական պիտի ըլլայ այս կալուածին Տիրաննալու համար։ Եւ վատան ենք որ մեր Սիրենի ժողովուրդը, այս զումարին կարեւոր մեկ մասը պիտի գոյացնէ Մեռունօրհնենքի առքի։ իր բերելիք դրամական նուերներով։

Կը յանձնարարենք մեր Գեր. Թէմակալ Սրբազնութեան որ այժմէն, իրենց Թէմերուն մէջ, պարտուածան կարգադրութիւններն ընեն, Հանգանակիշ Յանձնադողովներ կազմելով, Հայաստանի այց Եկեղեցւոյ հաւատարիմ զաւակներու սրտաբուխ եւ վեհանձն նույնական ընդունելով համար կանոնաւոր արձանագրութեամբ, եւ յորդորել մա՛հաւանիդ ունեւորները որ Սրբալոյս Մեռոնի Կեֆահայրութիւնն սահմանեն անձամբ կամ պատուակալ Եղանակաւ, նույիրելով կարեւոր գումարներ ի նպաստ գնման եւ սահման Անքիլիսափ կալուածին:

Կը մաղթենք որ Շնորհաց ազբիւրը, Ս. Հոգին, շնորհնով լեցնէ մեր Ա. Եկեղեց-
ւոյ Սիրելի զաւակներուն սիրը եւ գերազոյն իմաստուրեամբ լուսաւորէ անոնց միքսքը,
որպէս զի ըմբռնեն զործին կարեւորութիւնը եւ անվերապահ շարժումով թեւ թիկունիք
ըլլան իրենց Մայրենի Եկեղեցւոյ այս Հոգեւոր Կեդրոնին, եւ իբրև արդիւնք իրենց
անկեղծ սիրոյն եւ անհամար հաւատքին, իրենց անսակարկելի ու անկառապ ազգասի-
րութեամբ Տեր ընեն Կիլիկիոյ Կարողիկոսական Արքուն այս կալուածին, որ հինգ տա-
րիներէ ի վեր նուիրազործուած է եւ հայացած՝ իբրև Կարողիկոսարան եւ վառարան
լուսաւոր զիտուրեան եւ Հայ Թարութեան եւ Ազգային Մշակոյրի:

Օհնաձայն Աղջոյններով


Ալորաց

ԱՄ.ՀԱ.Կ Բ. ԿԹ.Դ.Ս. ԿԻԼԻԿԻՈՆ

ԱՐՈՂԱԿԻՑ ՆՈՐԻՆ ԲՍ.ԲԳՔՆ ԿԹ.Դ.Ա.

1936 Յաւնուար 1.
Կաբոդիկոսարան
Ա. Եթիվիաս — Լիբանան

1213-2000



21-62